Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2010 թվականին քաղաքացիների ընդունելության և նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2010 թվականին քաղաքացիներից ստացվել է 1592 նամակ, որից 1568-ը՝ դիմում, 14-ը՝ բողոք, 11-ը՝ առաջարկություն:

Գյուղատնտեսական, կոմունալ-կենցաղային, բնակարանային, նպաստի և կենսաթոշակի հարցերի վերաբերյալ 81 դիմումներից 73-ին տրվել են սպառիչ պատասխաններ: Հողօգտագործման և հողհատկացման վերաբերյալ 34 դիմումներից 27-ին տրվել է դրական լուծում կամ, գործող կարգի համաձայն, ներկայացվել է ՀՀ կառավարություն: Աշխատանքի տեղավորման և հաշվառման մասին 72 դիմումներից դրական լուծում է ստացել 19-ը, 28 դիմումների վերաբերյալ մարզպետի կողմից միջնորդություններ են ներկայացվել համապատասխան կազմակերպություններ՝ աշխատանքի տեղավորման հարցում օժանդակելու խնդրանքով, մյուսները՝ հաշվառվել են:

Տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների իրավասություններին առնչվող 85 դիմումներ վերահասցեագրվել են համապատասխան համայնքների և կազմակերպությունների ղեկավարներին:

Նյութական օգնության խնդրանքով մարզպետին դիմած 778 քաղաքացիներից դրամական օգնություն է ցուցաբերվել 595 քաղաքացիներ: Անվճար բուժսպասարկման խնդրանքով դիմած 138 քաղաքացիներից բավարարվել է 131-ի խնդրանքը, 30 քաղաքացու տրվել է ծննդօգնության պետական հավաստագրի տրամադրման միջնորդություն, 89 հոգու տրվել է առողջարանային բուժման ուղեգիր:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը: 2010թվականին կատարվել է 242 քաղաքացիների ընդունելություն:

Բացի այդ, մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ կատարվել են քաղաքացիների արտահերթ ընդունելություններ:

Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում քաղաքացիների անհատական ընդունելությունը կազմակերպվել է ամենօրյա, աշխատանքային կարգով:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիների դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ

/2010թ./

1. Ստացվել են նամակներ ընդամենը - 1592

որից՝

առաջարկություն	11
դիմում	1568
բողոք	14
այդ թվում՝	
կրկնակի	10
կոլեկտիվ	7
3. Ըստ հարցի բնույթի՝	
բնակարանային	22
կոմունալ-կենցաղային	31
շինարարական	39
արդձեռ/տրանսկապ/	1
գյուղատնտեսական	10
բնութ. պահպանութ.	10
առևտրի	3
կենսաթոշակի և նպաստի	18
առողջապահության	334
կրթական և մանկ.հիմն	117
գիտութ.կուլտուրա	8
ֆինանսական	778
օրենսդրական	6
քաղ. և որդեգրման	17
աշխ.տեղ և հաշվառման	72
հողհատկացում և հողօգտ.	34
ապարատային	27
այլ հարցեր	66